ՋԱՆԻԼԻՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԹԵՐԹԵԼ ԷԿՐԱՆԸ

Նա շատ էր ուզում տեսնել հաջորդ տեսահոլովակը: Եվ հաջորդը: Եվ հաջորդը:

Շառլոտ Լարկաբալ Սփիքմեն
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Մալայզիայում:

Ջանիլինը բթամատը սահեցնում էր հեռախոսի էկրանի վրայով: Տեսանյութերը հետևում էին միմյանց: Նա կանգ առավ դրանցից մեկի վրա, հետո նորից շարունակեց արագ թերթել: Ապա նա կանգ առավ մեկ այլ տեսանյութի վրա: Խոսում էին շատ վատ բառապաշարով, սակայն դա զվարճալի էր, ուստի, նա շարունակեց դիտել: Եվ հետո շարունակեց թերթել էկրանը:

«Ջանիլին, ուզո՞ւմ ես նկարել»: Նրա կրտսեր քույրը՝ Ջոջոն, օդում թափահարեց մի թերթիկ:

Ջանիլինը հայացքը բարձրացրեց: «Ոչ հիմա»:

«Լավ»: Ջոջոն խոժոռվեց և թուղթը ցած դրեց:

Թերթեց: *Թերթեց*: *Թերթեց*: Գեղեցիկ կենդանիների տեսանյութեր: Հայտնի մարդկանց տեսանյութեր: Պարող երեխաների տեսանյութեր: Եվս մի քանի տեսանյութ, բայց Ջանիլինը գիտեր, որ պետք չէ դիտել դրանք: Նույնիսկ ավելին էին, քան մի քանիսը: Ջանիլինը սկսեց այնպիսի զգացողություն ունենալ, որ ինքը պետք է դադարեցներ դիտել դրանք:

Բայց մարդիկ նաև շատ լավ բաներ են տեղադրում, - մտածեց նա: Նա նույնիսկ սովորել էր նկարելու նոր հմտություններ մի քանի տեսանյութերից:

«Ջանիլին»,- կանչեց մայրիկը:

«Հը՞մ»: Ջանիլինն այս անգամ նույնիսկ հայացքը չբարձրացրեց:

«Այս երեկո մենք բրինձ ենք ուտելու տապակած ծովամթերքով»,- ասաց մայրիկը: «Կօգնե՞ս ինձ պատրաստել այդ ամենը»:

Ջանիլինը սիրում էր բրինձը տապակած ծովամթերքով: Սակայն նա չէր ցանկանում օգնել այդ պահին:

«Կարո՞ղ եմ ես պարզապես սեղան գցել»,- հարցրեց նա: «Ես կարող եմ հետո նաև օգնել ամանները լվանալիս»,- խնդրեց նա:

«Լավ»,- ասաց մայրիկը: «Բայց դու պետք է սեղան գցես հենց այն պահին, երբ ասեմ: Եվ այդ ժամանակ նաև պետք է վերադարձնես հեռախոսը: Պայմանավորվեցի՞նք»:

«Պայմանավորվեցինք»,- ասաց Ջանիլինը:

Ջանիլինը շարունակում էր տեսանյութեր դիտել: Կրկին նա զգում էր, որ չպետք է դիտեր դրանք: Բայց նա շատ էր ուզում տեսնել հաջորդ տեսանյութը: Եվ հաջորդը: Եվ հաջորդը: *Թերթեց*: *Թերթեց*: Դժվար էր կանգ առնել:

Ի վերջո, Ջանիլինը ցած դրեց հեռախոսը: Դե, միգուցե նա կարող է պարզապես ավարտել վերջին տեսանյութը: . . .

Ոչ, ինքն իրեն հաստատակամորեն ասաց Ջանիլինը: Սուրբ Հոգին հուշում էր նրան, և նա ուզում էր լսել: Նրա ձեռքը դեռ պտտվում էր հեռախոսի շուրջը: Դա այնքան գայթակղիչ էր: Ջանիլինը ամուր փակեց աչքերը:

Սիրելի Երկնային Հայր, - լուռ աղոթեց նա: *Ես ջանում եմ լսել Սուրբ Հոգուն, բայց ես օգնության կարիք ունեմ*: *Ես ուզում եմ դադարեցնել այս տեսանյութերի դիտումը, բայց ես վստահ չեմ՝ ինչպես անել դա*: *Հիսուս Քրիստոսի անունով, ամեն*:

Հենց այդ պահին մայրիկը կանչեց նրան, որ սեղան գցի: Ջանիլինը վեր թռավ և ժպտաց: Դա եղանակներից մեկն էր՝ օգնելու նրան հեռացնել հեռախոսից:

Ջանիլինը ափսեները շարեց սեղանին: «Մայրիկ, ես մի քանի վատ բան տեսա հեռախոսով»,- հանկարծակի ասաց նա:

Մայրիկը հայացքը դարձրեց նրա կողմը: «Ի՞նչ բաներ»:

«Պարզապես վատ խոսքեր և վատ տեսանյութեր»: Ջանիլինը թոթվեց ուսերը: «Բայց *ամեն* ինչ այդքան էլ վատ չէ»:

«Դու ինչպե՞ս վարվեցիր, երբ տեսար վատ բաներ»,- հարցրեց մայրիկը:

Ջանիլինը մի պահ լուռ էր: Նա ամեն ափսեի մոտ մի բաժակ դրեց:

«Ես շարունակում էի դիտել»,- ասաց նա: «Ես չգիտեմ, թե ինչու: Բայց Սուրբ Հոգին ինձ ասաց, որ դադարեցնեմ, ուստի ես օգնության համար աղոթեցի»:

Մայրիկը սեղանին դրեց շոգեխաշած բրնձով և տապակած ծովամթերքով ափսեն: «Երբեմն իսկապես դժվար է դադարել անել բաներ, նույնիսկ երբ մենք գիտենք, որ դա վատ է»,- ասաց նա: «Եվ երբ դա տեղի է ունենում, լավագույնը, որ մենք կարող ենք անել, աղոթելն է»:

Ջանիլինը ժպտաց: «Այսպիսով, ես ճիշտ եմ վարվել»:

«Իհարկե»: Մայրիկը Ջանիլինին գդալներ տվեց սեղանին դնելու համար: «Եվ ինտերնետն ամենևին էլ վատ բան չէ: Այն կարող է օգնել մեզ կապվել ընկերների հետ և կիսվել գաղափարներով: Բայց կարող է դժվար լինել նաև բոլոր վատ բաներից հեռու մնալը: Այսուհետ, եթե պատրաստվում ես տեսանյութեր դիտել, արի դրանք միայն միասին դիտենք: Այդ կերպ ես և հայրիկը կարող ենք օգնել, եթե ինչ-որ վատ բան տեսնես»:

Ջանիլինը գլխով արեց: Հաջորդ անգամ նա տեսանյութեր կդիտեր մայրիկի և հայրիկի հետ միասին: Բայց մինչ այդ, կային բազմաթիվ զվարճալի բաներ, որոնք նա կարող էր անել առանց հեռախոսի:

«Կասե՞ս բոլորին, որ ընթրիքի ժամն է»,- հարցրեց մայրիկը:

«Այո: Իսկ ընթրիքից հետո ես պատրաստվում եմ նկարել Ջոջոյի հետ»: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԻՉ ՄԻԼԼԵՐԻ